

# ԳՈՐԾԱՐԱՐ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ



# Յուրօրինակ կրթական ծրագիր

**«Բարեպաշտ սերունդ»** հիմնադրամը **«ԱՄՔՈՐ Հայաստան»** բարեգործական հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ ***«Գործարարություն և առաջնորդություն՝ հիմնված հոգևոր արժեքների վրա»*** ծրագրի շրջանակներում երիտասարդների համար իրականացնում է վեցամսյա (փետրվար-հուլիս 2025թ.) **անվճար** դասընթաց: Դասընթացի ավարտից հետո մասնակիցները կստանան **վկայականներ,** ինչպես նաև նրանց լավագույն ծրագրերը **դրամաշնորհների (450.000 ՀՀ դրամ)** կարժանան:

## Զարգացրեք գործարարության և առաջնորդության ձեր հմտությունները:

***Գիտելիքն ու առաքինությունն են ապագայի երաշխիքը:***

**Դասընթացի հիմնական ուղղությունները՝**

1. **Առաջնորդության սկզբունքներ**
2. **Բիզնեսի հիմնում ու կառավարում**
3. **Գործարար հաղորդակցություն**
4. **Մարքեթինգի առանձնահատկություններ**
5. **Ֆինանսական կառավարում**
6. **Նորարարական գործարարություն**
7. **Կոնֆլիկտաբանության հիմունքներ**
8. **Մեթոդաբանություն**

**Ո՞ր հմտություններն են առաջնորդին առանձնացնում մյուսներից:**

- Մեծ առաջնորդներն ամեն օր սովորում են բոլորից
- Առաջնորդն արդյունավետ ունկնդիր է
- Առաջնորդներն անդրադառնում են անցյալին ապագայի պլանավորման ժամանակ
- Առաջնորդներն օգնում են բոլորին զգալ իրենց որպես խնդրի լուծման մասնակից
- Առաջնորդները լավատես են և դրական վարք են մոդելավորում



Դասընթացի մեկնարկը **փետրվար** ամսին է: Ավարտը՝ **հուլիս** ամիս:

*Հուլիս ամսին մասնակիցների համար կկազմակերպվի նաև արշավ-ուխտագնացություն դեպի ՀՀ պատմական վանքերից մեկը:*

**Հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2025 թվականի հունվարի 21-ը:**

Յուրաքանչյուր դասախոսության տևողությունը մոտ երկու ժամ է: Դասընթացը լինելու է երեկոյան ժամերին՝ 19:00-21:00:

Դասընթացը լինելու է հիմնականում՝ չորեքշաբթի օրը: Դասընթացը իրականացվելու է «Բարեպաշտ սերունդ» հիմնադրամի դահլիճում:

Դասընթացներն անցնելու են տարբեր ձևաչափերով, ինչպես օրինակ՝ lectures + case studies: Դասավանդման լեզու՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն:

Դասընթացի մասնակիցների տարիքը՝ 18-ից 35 տարեկան: Մասնակիցների թիվը սահմանափակ է: Մասնակցության համար կապ կհաստատենք էլեկտրոնային հասցեով:

**Գործարար առաջնորդության դասընթացը նոր համագործակցային կապեր հաստատելու լավ հարթակ է:**

**Դասընթացի ընթացքում կլուսաբանվեն գործարար առաջնորդության վերաբերյալ անհատական և ընդհանրական կարևոր խնդիրներ, դրանց շուրջ կծավալվեն քննարկումներ և վեր կհանվեն լուծման ուղիները:**

Գործարար առաջնորդության դասընթացը ձեզ կփոխանցի հետևյալ հմտությունները՝

1. Բիզնեսի կառավարման հմտություններ
2. Բրենդինգի, մարքեթինգի և ցանցային հմտություններ
3. Թիմային աշխատանքի և առաջնորդության հմտություններ
4. Հաղորդակցման և բանակցելու արդյունավետ հմտություններ
5. Ձեռնարկատիրական հմտություններ աշխատավայրում
6. Նորարար և ճկուն մտածողություն
7. Իրավիճավի կառավարման ունակություններ
8. Ճշգրիտ արդյունքի հասնելու կարողություն
9. Արագ կողմնորոշվելու ունակություն
10. Հետազոտական և վերլուծական մտածողության զարգացում
11. Բիզնես նախագծերի, ծրագրերի մշակում և պատրաստում

*Սույն դասընթացը յուրօրինակ է այն առումով, որ լուսաբանում է նաև քրիստոնեական արժեքների դերն ու նշանակությունը գործարար հարաբերություններում:*

«ԲԱՐԵՊԱՇՏ ՍԵՐՈՒՆԴ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

UMCOR Armenia Foundation

**ՀԱՅՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀՂՈՒՄԸ՝ ԱՅՍՏԵՂ**

Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 19ա, 3-րդ հարկ
«Բարեպաշտ սերունդ» հիմնադրամի գրասենյակ
Հեռ. 010 52 53 23
e-mail: info@barepasht.am
www.barepasht.am